ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Նորավան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/15 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 13.10.2023թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/15 գնման պայմանագրում 30.05.2024թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/15 պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետի փոփոխություն:
Փոփոխության նկարագրություն	ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/15 պայմանագրի օրացուցային գրաֆիկի փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.6 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
13.10.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/15 գնման պայմանագրի

ք. Երևան 30. 05. 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով **ՀՀ Արմավիրի մարզի Նորավան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 13.10.2023թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/15 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 1.3 կետում «270» թիվը փոխարինել «300» թվով:

1.1.2 Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ք. Գավառ, Անդրանիկի 5
կառավարական տուն 3	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150014871111107
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08404037
Հ/Հ 900011047256	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղարի	Տնօրեն՝
պարտականությունները կատարող՝	
Կ. Անտոնյան	Հ. Մնացականյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված
13.10.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/15 գնման պայմանագրի
30 . 05 . 2024թ. կնքված N 2 համաձայնագրի
«Հավելված N 2
13.10.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/15 գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Արմավիրի մարզի Նորավան համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքները	Աշխատանքների կատարման ժամկետը
1	Նախապատրաստական աշխատանքներ	ոչ ուշ քան 15-րդ օրացուցային օրը
2	Մանկապարտեզի շենքի կառուցում	ոչ ուշ քան 270-րդ օրացուցային օրը
3	Հակահրդեհային ջրամբարների, պոմպակայանի, կոյուղաջրերի հավաքման հորի կառուցում	ոչ ուշ քան 135-րդ օրացուցային օրը
4	Արտաքին ինժեներական ցանցեր	ոչ ուշ քան 195-րդ օրացուցային օրը
5	Տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ	ոչ ուշ քան 300-րդ օրացուցային օրը
	Ընդամենը	**300 օրացուցային օր**

N	Գումարը աճողական (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը
1	50 000 000	10.12.2023թ
2	214 000 000	14.06.2024թ.
3	714 444 400	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 300 օրացուցային օր

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխություններն անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ: »:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047256
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

Կ. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150014871111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝

Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.